ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Ծաղկունք, (0261)61104, (098)461103, caxkunqi.gyurapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2014թվականի N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17, 20-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.08.2011թվականի N1180-Ն որոշումը և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 30.07.2013թվականի N26-Ա կարգադրություն

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ նախապես բնակչության նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով՝

1) Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի.

2) Հաստատել Հայաստանի Հանրապետության գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի կազմում ստեղծել աշխատանքային խմբեր՝ համաձայն հավելված 3-ի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահին՝ մեկամսյա ժամկետում Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի տարահանման պլանը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013թվականի հունիսի 7-ի N501-Ա հրամանով հաստատված տարահանման պլանի օրինակելի ձևին:

3. Ստեղծել՝

ա. տարահանման հանձնաժողով.

բ. տարահանման /ընդունման/ հավաքակայաններ.

գ. ժամանակավոր տեղակայման կետեր.

դ. երկարատև բնակության կետեր

1) հանձնարարել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների ղեկավարներին՝ ստեղծել օբեկտային տարահանման հանձնաժողովներ.

2) որոշել տարահանման հավաքակայանների կառուցվածքը և կազմը, մշակել տարահանման հավաքակայանների /ընդունող հավաքակայանների/ կառուցվածքային մարմինների գործառնական պարտականությունները և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահի հաստատմանը՝ եռամսյա ժամկետում.

3) առաջնորդվել Հայաստանի հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013թվականի հունիսի 7-ի N501-Ա հրամանով:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահ Արթուր Դավթյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՏԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

2014 թ. մարտի 18
գ.Ծաղկունք